

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ  
 № 6 ԲԱՆՎՈՐԱԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՔԱՏՐՈՆ № 6

Պ. ՍՄԻՐՆՈՎ


# ՃԱՆԱՊԱՐՀ ՏՎԵՔ ՄԵԶ

ԴՐԱՄԱ 7 ՊԱՏԿԵՐՈՎ

Փոխադրւելուն Գ. Հախոբյանի յեւ Ն. Պետրոսյանի

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԱՂԱՅՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ—1929



882

Պ. ՍՄԻՐՆՈՎ

# ՃԱՆԱՊԱՐՀ ՏՎԵՔ ՄԵԶ

Դրամա 7 պատկերով

Փոխադրություն Գ. Հակոբյանի յեվ Հ. Պետրոսյանի



Հր. № 865. Գրառեպ վար № 1049 (բ): Տիրած 1500  
Պետհրատի առաջին տպարան վարչապետում  
Պատվեր № 256

Արագին ձոնում եմ բնդվող առ-  
ծվիկներին յեւ իմ քոջը—պիտներ  
Գլաւային

### ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՈՀԱՆ.—Չքաղիւր գլուղացի:

ՄԱՐԱՆ.—Սրա կինը:

ՍԻՄՈՆ

ՅԵՐԵՄ

ԿԱՐԱՊԵՏ

ԱԶՈ

} Նրանց զավակները:

ՄԱՐՈՒՇ.—Յերեմի կինը:

ՆՈՒՆԻԿ.—Սիմոնի հարսնացուն:

ՄՈՒԿՈՒԶ.—Գլուղացի աղա:

ՍՈՒՍԱՆ.—Սրա հարսնացուն:


ԹԱՄԱՄ.—Մարանի ընկերուհին:

ԽԱԶՈ.—Գլուղի կուլակ:

ԳԱԼՈ.—Հարեան:

ՅԵՐԻՏԱՍԱՐԻՆԵՐ.

Դեկտրացիան փոխվում ե միայն 7-րդ պատկերից:



## ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

Ոհանի տունը. ամեն ինչ դառն աղքատութիւն եւ ցույց տալիս: Աջ անկյունում, բացի դարակին դրած ավետարանից, սաղմոսից ու նարեկից, պատին կախ եւ տված վերջին դատաստանի պատկերը: Յերկու դուռ. առաջինը դեպի աջ՝ խորթանոցն եւ տանում, յերկրորդը՝ բնմի խորքում, ընդհանուր մուտք: Բացի Այոյից ու Մարուշից՝ Ոհանի ընտանիքը հացի յեն նստած:

ՈՀԱՆ.—(Մերումու արտաքինով, կսավե վարտիով ու շապկով, մեջքը լարանով կապած, տեխնետով, նստած եւ սուփրի ծայրին, մի կողմի վրա յե նայում. մուսլի, բարկացած դեմքով՝ հաճախ շփոթվող, անոգնակաւ. յերբեմն հառաչում եւ ու ճնում):

ՄԱՐԱՆ.—(Արտաքինով մարդուց փոքրիկ յերիսաստաղ, բայց նույնպէս շատ աղփափկ հագնված, նստած եւ սուփրի մյուս ծայրին. լալիս եւ՝ արցունքները ծածուկ արեղով):

ՍԻՄՈՆ.—(Ձեռները ծալած, գլուխը կախ՝ նստած եւ սուփրի կողքը. մտախոն ու յսուր՝ նայում եւ ծնկներին. դեմքը դալուկ, նորոս):

ՅԵՐԵՄ.—(Սիմոնի կողքին նստած, հացի դուռումը ձեռքին՝ բանը կրծուֆրո եւ անում, երբ ինչ սակ փրցնալընում եւ՝ Դեմքը կոպիս ու չար, դառը ժպիտով):

ԿԱՐԱՊԵՏ.—(14—15 տարեկան, առողջակազմ պատանի, շարունակ բերանը բաց եւ ման գալիս՝ հոր շապիկը հագին, հոր գլխարկը գլխին ու կրոկը միտ տակնընդին, Դիւարկի մեջ յերկու գրեւիկ, վարունցից Կարապետ չի կտրվում: Կարապետ մեծ մասամբ ինքն-իրեն եւ խոսում, վարին բոլորն ընկեցացել են յեղայնեան եղ ուշադրություն չեն դարձնում: Կարապետ լեզվի տակ չի մնում ու փոխաբերն հասցնում եւ՝ Սակոյն, չնայած հարձակումներին, վարոնք յերբեմն հանդգնութեան են հասնում, նա խեղդ եւ ու լավ եւ հասկանում բանի յեղեղությունը: Նա խո-

րամանկ կերպով անում ե այն, ինչ վոր իրեն պեճք ե, վորի մասին վոչ վոճ վոչինչ գլխի չի բնկնում: Բայց նա ի բնի կոմիկ ե: Վարագուշքը բացվելիս, Կարապետը բոլորից հետու ծալապաշիկ նստած, գիրք ե կարդում: Մեծ պաուկայից հետո, գիրքը գլխարկը դնելով, բռնեցնում նակաշին շրպապացնելով, խանգարում ե սրտմաշուկ լուրջունը): Կարապետ: Հը: Բա Բնչ: Տատիկ նաղըլի պոչը բռնի, են ել՝ տակ ու ծեր: Հի, ես բոպելիս (Թանը հացի հետ կրծուծըռ ե անում):

ՅԵՐԵՄ.—Ը՛հ, ախմախ անասուն, թողնես՝ հա իրան-իրան խոսի: Սարսաղ: Ուրիշի վրա ել հաջում ա, թե ախմախ են...

ԿԱՐԱՊԵՏ.—Մի որ դատեմ—որիս որ ուտեմ. ել Բնչ դարդ ունեմ (Գիրքը հանում ե ու յերգելով կարդում): Վա Կարապետը լիբը անգամ շվաքնում ե, ու մի ակնթարթում լազլազի չարդախի պես, հոտած տների տեղ քարաշին մեծ տներ են բուսնում՝ ինչպես անձրևից հետո սուսկեր: Հի, հի, հի, հի: Յալլա, շինարար: Ելի չորս անգամ շվաքնում ե Կարապետը, ու ես անգամ հնի նշուլն ել ե կորչում: Հրեղեն ձիու տեղ ավտոմոբիլներ ու արակոորներ են գալիս: Ու—հա ջան: Հի, հի, հի, Կարապետ, չլինի՞ եդ դու ելի: Թե դու ելի, հինգերորդ անգամ ել չշվաքնես, թե չե խրոմի կոշիկներդ ել կտարվես. դե. չես դրանց: (Շուտասեղանիկի պես): Ասում եր մի նախըջի—տոտոս կոշիկի սովոր չի: (Հեգնորեն) Ո՛հ ճ նախըջի, վա՛յ թե են ել ինձ պես իր որումը կոշիկ երես չի տեսել: (Հաստատուն) Հալլաթ: Հը՛մ... (Դառնալով սուխրա նստածներին) Ե՛լ, քոս կատուներ:

ՅԵՐԵՄ.—Հետո:

ԿԱՐԱՊԵՏ.—Լավ չի՞—մտենք տեղներդ, թունիք կախեք վոտներըդ, քան թե իրար միս ուտեք: Կամ թե ճակատ-ճակտի շրպապացնեք, եդ ավելի հեշտ ե, ե՛ն աստվածը:

ՍԻՄՈՆ.—Ծիշտ ե, Կարապետ, դու ճիշտ ես ասում:

ՄԱՐԱՆ.—Դուք խոսողի գլուխը ծակ ա:

ՅԵՐԵՄ.—Ախմախներինը:

ՈՀԱՆ.—(Ձառացած) Լավ տեղը բերիք—իրանց պես ախմախներինը: Հլա խելքովներին թամաշա արեք: (Պաուզա):

ԿԱՐԱՊԵՏ.—Թագա բարով եկար... Սուս նստելն ել մի բան չի: Կռիվ-կռիվ՝ չես թամաշա:

ՅԵՐԵՄ.—(Ձեռքը ծնկանը զարկելով) Ձենըդ, հիմար, քո Բնչ գործն ա:

ԿԱՐԱՊԵՏ.—(Մասնեմն այնպես եւ շարժում, կարծես զուռնա յե փշում)։ Տի-կո տի-կո բեր-գե-նի, տա-բա՛յ տի-կո բեր-գե-նի։ Հո- սլ։ Յերեմին կարգել են—ինքը ջաղցին ե լեղել։ (Հըր- հրում ե)։

ՅԵՐԵՄ.—(Ուղիղ դիմք ընդունելով) Հա դու մի կնոյ, տես լես քո գլխին սե ջաղաց կրեբեմ։ (Կարապետը հրհրաւով ու յե- յե՛ս՝ դեպի դուռն ե գնում)։

ՄԱՐԱՆ.—Անորի տղա անորան՝ երեսդ խա՛չ արա—չդիմտես։

ԿԱՐԱՊԵՏ.—Հա, հա, հա, ուրախ եմ, արի տես, վոր մեջքս չի կռանում։

ՄԱՐԱՆ.—(Սիւնից) Սաղ դու լես անում. քո արածն ա, շուն շան տղա։

ԿԱՐԱՊԵՏ.—(Յերգելու յեղանակով) Ա՛—մե՛ն։

ՄԱՐԱՆ.—Կփոշմանեք, կփոշմանեք, նեով դավակներ, բայց ուշ կըլի։ սաղ-սաղ դժոխքի փաչ կըլեք։

ԿԱՐԱՊԵՏ.—(Զգվաւով) Թ՛քել եմ դժոխքի վրա (Թ՛ում ե)։ Հաղ- թութուհը մերն ե։ Ենպես չի, Սիմոն։

ՈՀԱՆ.—Դուք Ի՞նչ չեք հաղթի վոր։ Բարը՝ ձերը—պոպոքը՝ ձե- րը, իշխանութուհը՝ ձերը, իրավունքը՝ ձերը, ինչ ուղեք՝ են ել կանեք։ Ի՞նչ ե դալիս բերանս, հա։ Մեղա աստու։ (Աղորում ե)։

ԿԱՐԱՊԵՏ.—Ջան, հայրիկ ջան, սուրբ Կարապետի դուլ հայրիկ, սերը քրիստոսի, դե մի Կարապետիդ առաջ ել ծուռը դիմ տեսնեմ։ (Հըրհրում ե ու յե-յե՛ս դեպի դուռը գնում)։

ՈՀԱՆ.—(Շարունակում ե աղորել) Դե լսվ ե, բոլ չեւիմ, գո՛ղ ա- վազակ. տամ հետադ—աչքերդ քոռանա։ Կտեսնես։ Մի խոսք եր՝ ասեցի։

ԿԱՐԱՊԵՏ.—Մուղաթ կաց, փայլդ քիչ կըլի։

ՈՀԱՆ.—Ի-ի՛նչ։

ԿԱՐԱՊԵՏ.—(Կեղմ) Կգնամ, հայրիկ ջան, կգնամ (Պառնա)։

ՈՀԱՆ.—(Առանց հասկանալու) Ա՛յ եղպես, հա. կկազդես՝ կուտես։ (Ծխում ե)։

ՄԱՐԱՆ.—(Աղորք անելով, սուրբից ամանները հավաքում ու գնում ե դիպի աջ)։

ՍԻՄՈՆ.—(Կանգնելով տեղում)։ Հայրիկ։

ՅԵՐԵՄ.—(Կրակ կտրածի պես բռնելով կոպաբար) Ի՞նչ ես ասում, հայրիկին Ի՞նչ պըտի ասես։

ՍԻՄՈՆ.—(Զարմացած) Ի՞նչ պատահեց, ե, ջանքմ։

ՅԵՐԵՄ.—Ե՛ն՝ վոր լիս, դո՛ւ, մեկելը, մեկելը մուգթախոռների նոքարը չե՛նք:

ԿԱՐԱՊԵՏ.—Հլա՛, հլա՛ կատուն ցնկնեկ է. թամաշ անենք: (Նրսում է դռան մոտ ու հետևում):

ՍԻՄՈՆ.—Եդ ի՞նչ է:

ՅԵՐԵՄ.—Ե՛ն, վոր դու կարմիր բանակում ավարա-սավարա ման գալը փիս սորվել էս: Ուշ ու միտքդ գիշեր-ցերեկ կանգ-մակերպություն, խը՛մբակներ, դասախոսություն, թիշատ-րոններն ու ջարուջանդամն ա: Համա վոր բանի վախտը գալիս ա, գիտաս թե գրողը հոգիդ առնում ա:

ՍԻՄՈՆ.—Լսի՛ր, Յերեմ:

ՅԵՐԵՄ.—Շուտե՛ւց եմ լսել:

ՍԻՄՈՆ.—Լսվ, լսվ:

ՅԵՐԵՄ.—Հը՛, չեցիր սպասում:

ՍԻՄՈՆ.—Ինչե՛ւ չե վոր: Ենքան եկ զարմանալու չի: Քեզնից ինչ ասես՝ սպասելու չե: Ա՛խ:

ԿԱՐԱՊԵՏ.—(Բարձրաձայն) Դե չա՛լա, կոիվ-կոիվ՝ լիս թամաշա:

ՍԻՄՈՆ.—Եդ դու լիս եղպես ասում, վոր գիշեր-ցերեկ ավարա-սավարա ման ես գալիս:

ՅԵՐԵՄ.—Հայրիկ, ես ձեռիս մջիցն ա եկել. սավարա-սավարա ման եմ եկե, ըստուց դեն ել պլտի ման դամ: Ա՛յ, եղպես, քավթառ սատանա, եղպես ել իմացի՛ր, վոր քանի Սիմոնի վտար մեր տնից չի կտրվել, լիս մատա մոխրի տվող չեմ:

ՈՀԱՆ.—Հորներդ ա՛հ մի տաք, բա՛լամ, չեք դորանա:

ԿԱՐԱՊԵՏ.—Կարապետին ել:

ՈՀԱՆ.—Գնամ թառմին պառկեմ ու ոճորքը թքեմ:

ԿԱՐԱՊԵՏ.—(Առաջ պառկում է մեջքի վրա) Յես ել կտրանը կը պառկեմ: Թքեմ լերկի՛նքը, պրծավ-գնաց: (Թխում է):

ՅԵՐԵՄ.—(Չարացած ու ծաղրելով): Բոլորս ել պառկենք ու նա-նիկ անենք: Իրեք որից հետո վոտնըներս փռենք, աչքը-ներս չռենք:

ԿԱՐԱՊԵՏ.—(Ձեռքերով փորը ծեծում ու յեղգում է) Ձի խաղա կարմրաթշիկ, կխաղա կշտափորիկ, տըմբլա-տըմբլը, տըմ-բլա-տըմբլը: (Առաջ վեր է բռնում) Թո՛ւ-հա, գրողի մտեն եթա, մոռացել եմ: Հայրիկ, լիս գնացի, դու հետևիցս կհաս-նես: (Գնում է):

ՈՀԱՆ.—Կայնի՛ մի տեղ եթանք, չըռզըկված (Դեպի դուռն է գնում):

ՍԻՄՈՆ.—Հայրիկ, հետդ բան ունեմ:

ՈՀԱՆ.—(Ձեռքը քափափախելով) Ինչ վոր պըտի ասես՝ իմանում եմ. լիս վոչ հարսանիք անող եմ, վոչ ել որհնութլուն տվող: Վոնց բրդեկ ես, գնահ ենպես ել կեր:

ՍԻՄՈՆ.—Յես ուրիշ բան ելի ուղում ասել, բայց վոր մերս ասել ե, արի եդ խոսենք: Ի՞նչ, մեկը ձեզ բավական չի: Յերեմը ձեր խոսքով ե կարգվի: Բաշլղով աղջիկ ե առել: Հայրիկ, լիս գիտեմ, վոր դու մորեցս ավելի լավ ես հասկանում:

ՈՀԱՆ.—Գլուխս մի լեղի, լիս երեխա չեմ, մազս սիպակացրել եմ, ամա դու հլա... Բան ե գտել, թուլա ավազակ: Բերում ես՝ լեմ. ջահնամը կրերես: Բայց չըլնեմ չիմանամ ել իմ տունը վորտ գցես հա՛ (Դուրս ե գնում, դուռն ամուր երկակացնելով):

ՅԵՐԵՄ.—(Չարացած ու ծողբելով): Եդ Յերեմին ես ասում, հա՛: Բաշլղը փորդ չի ցավացնի: Ինչքան ծախս ու մխս կա, սաղ հանել ա, ամա դու քո եդ հոտած մուռտառ խապաթով սաղ տունն իրար գլխով կտաք:

ՍԻՄՈՆ.—Մնա ե, դու գիտես, վոր լիս վոչ տերտերի մոտ գնացողն եմ, վոչ ել հարսանիք անողը:

ՅԵՐԵՄ.—Կարգվելս վժրն ա, շունը պոչը պտտի, աղքատի բերնի կգիպի: Դու ինձ տչք մի տա, լիս անխելքութլուն արի: Ախ վա՛խ, ախ վա՛խ: Թե՛, մտքիդ դրել ես բաժանվես: Հանգիստ չես կենում, բաժանվեցեք, բաժանվեցեք,—լիս իմ բաժինը կառնեմ, աստված ինձ հետ: Գիշեր ցերեկ կաշխատեմ, վորովհետե գիտեմ, վոր ինձ համար ե: Թե աշխատելուց ել բան գուրս չգա—կգողանամ, բա դո՛ւ:

ՍԻՄՈՆ.—Լսվ. բաժանվենք, բաժանվենք, բայց ի՞նչ բաժանենք: Բաժանվեցինք թե չե, պիտի գոնեգուռ ընկնենք:

ՅԵՐԵՄ.—Ե, կնկնեք. Ելի, ի՞նչ կա, վոր:

ՍԻՄՈՆ.—Ե՛հ... Ձեռքներս աշխատանք չի գալիս: Հողը լերես չի տալիս, մեկին լերկու հազիվ ե ձեռքներս գալիս: (Տախալացած): Յեղբայր, աչքերդ չորս արա, բոլորդ լսվ թամաշ արա, ապրուստից բան հասկացի. ի՞նչ, ես աշխարհը հո մենակ մերը չի: Սաղ աշխարհը ես մութ ու նեխած ճահճի մեջ գլահրա լծած գոմշի պես ալապուճիկ ե անում ու իրար խեղդում, իրար ձխլում: Բայց չիմանաս, թե աշխարհը վրներս փակ ե, դրան ել դուռ կա. լիս լավ գիտեմ, վոր մենք եդ դուռը կգտնենք: Որ ու գիշեր քուն ու դադար չունեմ: Իմ ուշ ու

միտքը, իմ ցափն ու հոգսը գլուղատնտեսական ընկերութ-  
յուն կազմակերպելն է, նոր առու հանելն է, վոր եղջան  
խամ հողերը վարվեն ու ցանվեն, ու բոլորն էլ հացի տեր  
դառնան: Ինչ լավ, վոր դու քո աչքով ես տեսնում, Յերեմ.  
հին առուն ջուր չի բերում, ու մեր հողերի կիսից ավելին  
պապից-պապ խամ ու անտեր վեր է ընկած:

**ՅԵՐԵՄ.**—(Վառձես քե հավատում ե, ասում ե կատակով ու մեղմ):  
Այ ջանըմ, դու ել դարտակ բան ես մտածում, ե'. բան գի-  
տես—բան ասա: Մենակ դու ըլելի, ելի հա, բանը բանի  
նման կըլի: Են ժամանակ մենք թագա լոնջի պես կկա-  
նանչելինք, թե .չե.. (ւռում ե ու ցորից կոպիս կերպով): Ի՜նչ,  
աչքակապութուն պտի անես, թե՛ թոխ ու թվանք վեր-  
ցնես: Եդ նոմերը չի անց կենա: Թագա հավ ա ելե, երկթե  
ձու լա ածում: Քնչալ ավարա: Վոր քոռնա ել, լես իմ ա-  
սածի տերն եմ: (Արագ դուրս ե գնում):

(Նեսս ե մեցում Մարանը):

**ՄԱՐԱՆ.**—(Սիւսնիկն, վոր կանգնած մտածում ե): Այ վորդի, ան-  
բալամ, դու արի քարը դողիցդ թափի ու մորդ ականջ արա,  
են լաչառ Նունիկին մի առնի, թարկը տուր, նա աստվածն  
ուրացել ա, անաստված ա, քեզ ել հետը ճամպից կհանի-  
կփչացնի: Այ վորդի, լսի, լսի, մեծին լսողի վտոր քարին  
չի առնի: Կասես թե են թառան Մաշոն պտի ըլի, վոր  
խելճք, ասու գառը, հորով-մորով աղջիկ, հերը հարճատ:  
Մի հասկացի, ե, համ դու կապրես, համ ել մեզ ձեռ կըռնես:

**ՍԻՄՈՆ.**—(Լուրջ): Դե, դու ել ձենդ կտրի, ե, քո դորձը չի:

**ՄԱՐԱՆ.**—(Նեղացած): Դե արի ու տղա ուզի. ամակ տամ, տղա  
պահեմ, մեծացնեմ, վոր ետոր չկարենամ հետը խոսի՞ ու ինձ  
ըսկի մոր տեղ ել չդնի, ուհ, ծծիս տաք կաթն աչքերդ բռնի:

**ՍԻՄՈՆ.**—Ա՛ռ քո տված մի կիլո կաթը, ուզում ես՝ եզուց գնամ  
գլուղկոոպից առնեմ-բերեմ: Թե մերութուն ես անում՝ կար-  
դին մերութուն արա, թե չե՝ վոնց դու լես որըդ աշխարքից  
բեխարար անցկացրել, ենպես ել ուզում ես, վոր մենք անց-  
կացնենք, եդ չես տեսնի:

**ՄԱՐԱՆ.**—Այ վորդի, լարաք խելքդ գլխիդ ա, թե՛ չե: Մերը հո  
տղին թշնամի չի: Զե՛ վոր լես քո բախտավորութունն եմ  
ուզում:

**ՍԻՄՈՆ.**—Բախտավորութուն եմ ուզում: Յես Նունիկին եմ սի-  
րում, իսկ դու ուզում ես լերսուն տարեկան քլավթառ լա-  
րուն կապես գլուխս:

ՄԱՐԱՆ.—Ե՛հ, վորդի Սիրած անեխն աղա մարդու բան ա, մեր ի՞նչ գործն ա եղպես բաներից: Յես ել ելի իմ հավատով սիրած արել, ամա գլխիս տալով լետ կալնացրին: Ենպես նշանեցին, վոր մինչև պսակի որը լես ու հալիվորն իրար երես հասանք:

ՍԻՄՈՆ.—(Ուսեր վեր բաշելով): Քեզնից բան չեմ հասկանում: Ի՞նչ, քո ասելով մենք ե՛լ պիտի քեզ պես քոռ մնանք:

ՄԱՐԱՆ.—Բա վճնց ես ասում: Բա ի՞նչ պտի անես, քանի վոր ասուղ զրած գիրքն ա ըղենց: Ուղում ա՛՛ վատ ել ըլի, պտի տանես: Ի՞նչ անենք. վոր ես աշխարհումս եմք: Ջրի պես գնացող բան եմք: Ա՛յ վորդի, ա՛յ բալամ, դու արի ու մեռնելդ միտդ գցի, վոր հոգի տալուց չղըղըռաս, ես դունչին կպրես կարասը չեթաս (Յույց տալով վերջին դաստասանի պատկեր): Ամա՛ն աստված, մարդու միտ ընկնելուց՝ միսը թափում ա: Ամա՛ն, վորդի փախիր, փախիր, եղ դժոխքի վառման կրակից:

ՍԻՄՈՆ.—Ձե, մերս, վոչ կվախենամ, վոչ ել բանի տեղ կգնեմ: Ի՞նչ դժոխք, ի՞նչ բան: Մեռար, պրծավ գնաց: Մարդ մի անգամ ե աշխար դալիս, իր ապրելու ձևը, իր ջանի զաղը պտի իմանա: Բա մենք եղ բանը գիտե՞նք: Բա ես ապրե՛լ ե, վոր մենք ապրում եմք: (Ձեռք բախանալով): Ա՛հ, ի՞նչ դատարկ խոսեմ, քամին տանի:

ՄԱՐԱՆ.—(Հանդիմանուրյամբ ու սպառնալով): Վոչ ասուղ գիրքն ես պահում, վոչ ծնողիդ խոսքն ես լսում, տես: Յես ու հալիվորը մինչև մաշ-գերեզման մեր թքածը չենք լիզի:

ՍԻՄՈՆ.—Մի լիզեք, լես լե՛րբ եմ ասել, վոր լիզեք: Լսո՛ւմ եք, դուք եմքան պտի անեք, մինչև վոր դանակն ոսկոռին հասցնեք:

ՄԱՐԱՆ.—Են անաստված ա, անեծքարերան ա, իմացմը, թե վոնց աղջիկ ա:

ՍԻՄՈՆ.—(Տախալով): Ախր մի հասկացի, ե, վոր դուք ել, ձեր որ ու աստվորն ել խավար ե. ու ձեր եղ ախ ու վախը, եղ լաց ու կոծը, ձեր աղի-արցունքը վոչ մեկին ել պետք չեն: Դրանք մեկ բոլորիս խեղդում, ճնշում են:

ՄԱՐԱՆ.—(Նարեկի Սիմոնի գլխին դնելով): Թո՛ղ մեա, վորդի, թո՛ղ մեա, վոր մի քիչ թեթևանաս:

ՍԻՄՈՆ.—(Առանց իմացալու, գլուխը բարձրացնում ե նարեկի վայր ե բնկնում), Ի-ի՞նչ:

- ՄԱՐԱՆ.**—(Լուսամուտին նայելով): Հրեն թաժամն ել ե դալիս: Իրար հետ գնանք Սառան բաջու մոտ: Նա թիպ չափող ա, ամեն բան իմանում ա:
- ՍԻՄՈՆ.**—(Հաստատուն): Սառան բաջու մոտ—դու վո՛չ տեսանես:
- ՄԱՐԱՆ.**—(Բարկացած): Բա վոր գնացի՞:
- ՍԻՄՈՆ.**—Գնա, ել դու իմ մերը չես: Իմացած լեզիր, վոր իմ ու Նաւնիկի արանքը չեք կարող քանդել:
- ՄԱՐԱՆ.**—Վոր եղպես ե, դու ել ինձ տղա չես, ճամպեն առաջի, գնա իմ տնից:
- ՍԻՄՈՆ.**—Յես չեմ ուզում ձեզ ես ջրհորի մեջ թողնել: Ա՛յ մեր, հասկացիր, լես քեզ սիրում եմ, ե, սիրում: (Փաքարվում ե): Մի գնա, մեղքից ես վախենում, ես մեղքը թող իմ ես վիզն ըլի, մի գնա: Ձե՛ վոր Սառան բաջին քեզ ալելի ճամպից կհանի: Մի գնա, ա՛յ մեր:
- ՄԱՐԱՆ.**—(Արցունքի աչեքին): Ինչ, ի՞նչ պատ ըլի վոր: Յես ուզում եմ քո հոգու ճարն անել ու կտեսնես, վոր կանեմ ել:
- ՍԻՄՈՆ.**—(Նկատում ե րնկած նարեկը: Վաճում հրում ե մի կողմի վրա): Ե՞ս վորտեղից եկալ:
- ՄԱՐԱՆ.**—(Իսկույն վերցնում ե: Թեվով սրբում ե: Համբուրում ե, մոտեցնում ե Սիմոնին): Մեղա աստու, մեղա աստու, համբուրա, համբուրա, բալբի պատիժդ չտա:
- ՍԻՄՈՆ.**—Լավ, վոր չգնաս, կհամբուրեմ:
- ՄԱՐԱՆ.**—(Տատնվելով): Թե ամեն ուր աստուն աղոթք անես ու նարեկի տաջ ծուռորդ դնե՞ս, չեմ գնա:
- ՍԻՄՈՆ.**—Կանեմ (Փաքարվում ե): Ձե՞ս գնա, չե՞:
- ՄԱՐԱՆ.**—Աման, աստված, մեղքերս ծանր են (Սիմոնին): Ի՞նչ անեմ. թող քո ասածն ըլի:
- ՍԻՄՈՆ.**—(Ուրախացած): Ե՛հ, շնորհակալ եմ, մայրիկ: (Թալմաք գետն ե մտնում):
- ԹԱՄԱՄ.**—Բարե ձեզ: Քա Մարան, շուտ արա, ուշանում ենք, ե, աղջի:
- ՍԻՄՈՆ.**—(Երիճաղելով): Գնում ես՝ մենակ գնա. մե՛ք ով, նա՛ ով:
- ԹԱՄԱՄ.**—Ե՛լ, գլխդ, աչքերդ լավ բաց արա, մեծարեիրանու-թենի թարկը տուր. քեզ նման եղպես մի աստու երեսեն թափածն ել կար, ենքան եղպես արավ, մինչև աստված գլխին տփեց, հիմի թևերի միսն ուտելով ա ման դալիս, գշեր-ցերեկ գլուխ դնելու տեղ չունի:
- ՍԻՄՈՆ.**—Վսնց թե՛ թևերի միսն ուտելով:

**ԹԱՄԱՄ.**—Ե՛նպես, ելի Գիշերը զնում ա դումը՝ տավարին դարման տալու, տեսնում ա, վոր գոմեշների արանքին մի սիպտկամորուք մարդ (խաչակնելում ե): Ծառա կըլիմ սուրը զորութենին—ասում են՝ Խաթունարխա սուրը նշանն եր,—կթում ու գալիս ա: Տղի աչքը սրբին առնելուն պես, սուրը ձեռաց մատը թափ ա տալիս վրեն, թե՛ ճամպիցդ լնտ դարձ, առավոտն ադ ու մատաղով իմ գոռն արի, թե չե՛ կկատողացնեմ, կզցեմ չոլերը: Տղեն ասում ա՝ դու ո՞վ ես վոր, մենք սուրը-մուրը չենք ճանաչում: Սուրը մոտենում ա ու ծառի պես կանգնում առաջը: «Դու բալեղիկ ես» —ասում ա:—Բալեղիկ եմ—ասում ա տղեն:—«Սուրը չե՛ս ճանաչում», —ու մեկ ել ա հարցնում:

**ՍԻՄՈՆ.**—(Ժպտալով): Հեռո՞:

**ԹԱՄԱՄ.**—Հեռո աներեկութք ելավ: Տղեն ուշաթափվում, վեր ա ընկնում: Հենց են որվանից ել ալսահարում, ընկնում ա քուչեքը: Գոմն ել դարտկվում, մնում ա անտեր, անտիրահան: Մինչև ես որ ել մարդ դարդանդով ա մոտիկ անցնում: Իմացմ-մոր (Մարտնիկ): Դու ինչ ես վարդապետի ծառի պես տեղդ վրավրտում: Շալըդ առ՝ եթանք:

**ՄԱՐԱՆ.**—(Կցկտու): Յեսիմ ե: Յես ել միտք եմ անում, թե ո՞վ ա իմանում՝ ենքան հեռու չմ—չերսուն վերստ կըլի:

**ԹԱՄԱՄ.**—(Տնազն անելով) Յեր-սուն վերստ: Հազար վերստ ել կեթաս, թե վոր սրտացավ մեր ես: Տղա կարգել ա, տղա բերել չի, վոր ձեռաց... Հարիբ անգամ ընկնում ես—ըլում, ելի տեղը չի գալիս: Ուր մնաց վոր նա մեր թալը չի, ամա ելի հենց...

**ՄԱՐԱՆ.**—Ի-ի՛նչ:

**ԹԱՄԱՄ.**—Քա բա երեկ իրիկուն լես քեզ չասի՞:

**ՄԱՐԱՆ.**—Վա՛յ, ֆողը գլխիս, ըտենց ել սճառ կըլի, չմրը ես ասել:

**ԹԱՄԱՄ.**—(Սիմոնին) Անկաջդ բաց պահի, քեզ ել ե հասնում. քեզ պես մեկն ել ելի բեյինն եր գցել՝ առանցի ծնողներին հարցնելու ես աղջկա հետեն եր ընկել, ե՛ն աղջկա, վերջն ել ընենց մի թողուն թավադի թուշ եկավ, վոր չորս որից հետո իր պես մի գորսաթմա բերեց:

**ՄԱՐԱՆ.**—(Յերեսը խաչակնելով) Մեղո՞ տասու, ըզենց ել բմն կըլի, ազապ աղջիկն ել երեխա բերի՞:

**ԹԱՄԱՄ.**—Բա հո սուտ չի՞: Քոմմեքն ել գիտենա չլա իրենց գիդի տերտերն ել գատիկի պատարադի սրը ժողովրդին ծանուցում արեց:

ՍԻՄՈՆ.—Այ մեր, սուտ ե, ահանջ մի անի, ե:

ԹԱՄԱՄ.—(Մարանիկ) Ասում եր՝ տատմերն ել տեսելա, թե ջանի կնկա պորտի բոլորը ռիտանասուն ռիտ միլլաթի չեզվով բալշովիկի փեշատ կա դրած:

ՄԱՐԱՆ.—Դձ չես իմանում, վճրդի, ինչ ուզում ես—արա. ամա պտի եթանք: (Շեշելով) Չգաս ել՝ մենակ կեթում, մենակ: Թամամ ջան, ես սհաթը (գնում ե դեպի աջ):

ԹԱՄԱՄ.—(Սիմոնիկ) Դո թողուն թավադն ել եդպես կըլի, միտդ պահի: Պորտի բոլորը փեշատած կըլի:

ՍԻՄՈՆ.—(Ձեռք քափահաղելով) Բձլ ա զավզազլամիշ ըլիս. կորի—ռադ ելի, քավթառ:

ԹԱՄԱՄ.—(Վախեցած յես յես գնալով) Հլա մեկ մոտ արի, քոնը տես, դող-աղազակ շան տղա:

ՍԻՄՈՆ.—(Խսկույն շուռ գալով՝ դեպի մուսֆի դուռն ե գնում. դեմ ու դեմ ներս են մեցում Աչուն ու Մարուտը, վեջինս յերեսան գրկից):

ԱՁՈ.—Ապեր, ձին ներս քաշես: Ելի եղ ինչ ա ելի:

ՍԻՄՈՆ.—(Լուռ դուռս ե գնում):

ՄԱՐՈՒՇ.—(Գնում ե դեպի աջ: Այդ բոպիյին կապոցը ձեռքին ներս ե մեցում Մարանիկ):

ՄԱՐԱՆ.—(Աչույից) Եկաք: Մարուշն եղ ինչ որն ա ընկել, աղջի, կասես կամից նոր արձակած կով ըլի:

ԱՁՈ.—Բժիշկն ասում ա, վոր Յերեմի վրա սուղը գանգաա տա:

ՄԱՐԱՆ.—Դոխտուրը շատ բան կասի, դու ահանջ անողն ասա: Հլա տես, ե, գրողի խեղդած չորս աչքանուն հլա տեսնում ես. սուղը գանգատ տա:

ԱՁՈ.—Յես ել եմ Մարուշին եդպես ասում. սուղը գանգատ տուր, պրծանք-գնաց:

ՄԱՐԱՆ.—Աղջի, դու հո սատանա չես: Եսպես ել ալամ կըլի, ել չես կարում մեկին ասես՝ աչքիդ վրա ունք կա: Յերեմը Նրա հալալ մարդն ա, հո են պատերի տակը շան պես պսասցող-նեբից չի վոր:

ԱՁՈ.—Հալալ—հարամ, են վախովա որենքները գնացին, վոր կնկան կատվի պես ծեծում ելին: Հլա մի բաց արա—տես. խեղճի ջանը սաղ կապուտ լեղակ ա ելի:

ՄԱՐԱՆ.—Ել բլբլացրա, ել:

ԱՁՈ.—Յերեմը ֆանդով ա, թպուռն ա տփում: Մարուշը լաց ա ըլում, լաց ա ըլում—մարդու բան չի ասում: (Թամամիկն նկատելով) Վահ, չես չեյի տեսել: Բարձով, ե, հորքուր Թամո:

**ԹԱՄԱՄ.**—Թամաշ հմ անում — մնում հմ շիվար: Աչք ու երեսիցդ  
երևում ա, վոր դու ել, շան դանջդ, կոմունի համը տե-  
սել ես:

**ԱԶՈ.**—Հա:

**ԹԱՄԱՄ.**—Ի՞նչ հա: Բա չես իմանում, վոր ինչքան կոտրած-  
կպցրած՝ քոռ կապեկ հաժող բաներ կան, սաղ լավերի գլուխն  
են կապում: (Մարանին) Արի եթանք:

**ՄԱՐԱՆ.**—(Շալը գլուխը գցելով) Քեյի: Աչո, արի, մեզ ճամբու  
զցի:

(Աջից ներս ե մտնում Մարուքը):

**ՄԱՐՈՒՇ.**—(Սուվիից հացի կտորն առնելով՝ ծախում ե ու մտնով  
դնում լացող յերկսայի բերանը, Լացակումած), Կեր, բալիկս,  
կեր:

(Ներս ե մտնում Յերինը):

**ՅԵՐԵՄ.**—(Դուռն մոտից, կոպիտ) Հիվանդներն եկել են: Ի՞նչ ես  
աչքերդ մզում, չըլի՞ բան-ման ե պատահել:

**ՄԱՐՈՒՇ.**—(Դառնուքով) Ի՞նչ լավ որիս վրա ուրախանամ:  
Խեղճ քյորփիս հուր-հավիտյան սախտել ես:

**ՅԵՐԵՄ.**—Վճնց թե:

**ՄԱՐՈՒՇ.**—Բժիշկն ասում ե՝ երեխին կուղ դուրս կգա, հլա քո-  
ռուխուռն ել ավելի:

**ՅԵՐԵՄ.**—Քոռուխուռն եր: Բա եղ վորտեղից:

**ՄԱՐՈՒՇ.**—Դու փիս ցավ ունես, քեզ պտի հիվանդանոց տանեն:

**ՅԵՐԵՄ.**—Բերնովդ խոսի, փիս ցավս վճրն ա:

**ՄԱՐՈՒՇ.**—Փիս ցավը չես իմանում:

**ՅԵՐԵՄ.**—(Տնագն աճելով) Փիս ցավ. լավ ցավ ե՞լ կա: Բա դու,  
լավ ցավ ես:

**ՄԱՐՈՒՇ.**—Սուսանակ ես, ելի:

**ՅԵՐԵՄ.**—Հաջի, շան պես հաջի: (Պառլա) Ել բան մնաց:

**ՄԱՐՈՒՇ.**—Բոլ չի՞ (Պառլա): Բժիշկն ասում ա՝ երեխով ես:

**ՅԵՐԵՄ.**—(Ռեսինն զնդակի պես մոտ քոչելով) Ելի: Հո չե՞ս կատղել:

**ՄԱՐՈՒՇ.**—(Վախեցած) Բա չես ինչ հմ արե...

**ՅԵՐԵՄ.**—Են, վոր դու կատվի ջինս ես. հլա երկու տարին չթա-  
մամած՝ իրեքը բերել ես, հինգ տարուց հետո, ո՞վ ա իմա-  
նում, սաղ դուժին լանդուլավազ դուրս հանես: Մի աման-  
չի, ամանչի, գետինը մտի:

**ՄԱՐՈՒՇ.**—(Ուզում ե բան առել, բայց չի կարողանում, լուռ գնում  
ե դեպի աջ):

**ՅԵՐԵՄ.**—(Ձեռքից բռնելով) *Կանչի, դեղնած պղինձ: Հլա ասա տե-  
նամ: Կարող ես՝ մի-երկու անգամ ել ջուխտ-ջուխտ բերես:*  
(Բռունցքով խփում է Մարութի փորին):

**ՄԱՐՈՒՇ.**—(Մուկն չոգելով) *Յերեմ, մի տա, տեա, թե չե ելի չեմ  
կարա տեղ հասնի, ճամպին կգցեմ:*

**ՅԵՐԵՄ.**—(Այս ու այն կողմ է վազվզում, վայրենաբար ու նուսա-  
հաս): *Եսպես ել բան կլլի: Վերջն ինձ սաղ-սաղ գերեզ-  
ման կգնի: Հը՛, դանջը՛դ (Ուզում է նորից խփել):*

(Առագ ներս է մտնում Սիմոնը):

**ՍԻՄՈՆ.**—(Յերեմին քափով յետ է մղում, Մարութին ձեռքից բռ-  
նում-կանգնեցնում է) *Ա՛յ, թե ինչ պիտի ասեմ, Մարութ: Յես  
հսոր գործկոմում բանը գլուխ եմ բերել—ավել անողի տե-  
ղը քոնն ե: (Յերեմին) Քեզ համար ել—ճաղերի հետեն եմ  
տեղ գտել:*

**ՅԵՐԵՄ.**—(Ցախի կտոր վերցնելով) *Ճաղերի հետեը՞, հա՛, հա՛:  
(Ձեռքը քափահաբելով):*

**ՍԻՄՈՆ.**—(Բղավում է լուսամուտից) *Մուկսւնչ, շուտ արա, հասի,  
Յերեմը կատղել ե:*

**ՄԱՐՈՒՇ.**—(Կանգնում է Յերեմի ու Սիմոնի արանքը):

(Ներս է վազում Մուկուշը):

**ՄՈՒԿՈՒՉ.**—(Յերեմին) *Դու ելի՛. ցախի կտորը տալի՞ս ես, թե չե:*

**ՅԵՐԵՄ.**—(Ձեռքը քափահաբելով) *Մոտ չգաս, թե չե կտամ՝ կսատ-  
կես:*

**ՎԱՐԱԳՈՒՅՐՆ ԱՐԱԳ ԻՋՆՈՒՄ Ե**

## ՅԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

(Բեմի յետմիջ գալիս ե Յերեմի կողիս ձայնը. « Ե, Ե, Ե...  
Դեղացիին եթ կորցրել ե... Ե, Ե, Ե »)

**ՅԵՐԵՄ.**—(Ներս ե մեկում, ցնցոսիներով փարարած յերեսան ձեռ-  
քին, խոսում ե դանդաղ ու ծորացնելով): *Բալիկս, Սեթիկս,  
Սեթմեթիկս, ինչի՞ համար աշխարհ էկար: Յերեսան ավելի  
ուժեղ ե լաց լինում*) *Խեղճ երեխես ել ա քոսարախոտութենն  
իմանում: Իմանում ա, իմանում: Դե սատկում ես—սատկի, Էլի,  
թուրա, քո որ ու ասովորն ինչ պտի ըլի: Մեջքդ՝ կուզիկ,  
քիթդ՝ պնչատ, վոռներդ՝ իլիկ: (Խփելով) Ջհնդ: Ի՞նչ ես  
ծիծա կծում: Սպասի լես... (Խուլ, նուսահալ): Ջուր ա, դու  
մեզ երեխա ըողը չես: (Դուռն ու լուսամուտը բաց ե անում  
ու յերեսայի ցնցոսիները հետ տանելով՝ վայրենաբար ու չա-  
րացած): Թող քամին տա, ես մեղք ու պատիժն ուրե անի:*  
(Դիմ կարդալով ներս ե մեկում Կարապետը):

**ՅԵՐԵՄ.**—(Նկատելով, արագ գնում ե ուրիշ կողմի վրա յեւ աշխա-  
տում ե՝ մեղմ) *Հը, տը, տը, տը: Ֆնանո, նանո, բոլիկս,  
նանո: (Կարապետին) Ի՞նչ, դու իմացար, թե լես ընենց ա-  
րբ: Յես ճանճերն ի քշում, անտերներն երեխին կերան:*

**ԿԱՐԱՊԵՏ.**—(Իբր քե չի լսում, շարունակում ե կարդալ):

**ՅԵՐԵՄ.**—(Պառկայից հետո): *Ելի՛նդ անտեր պապըտիչը ձեռդ ա-  
ռա:*

**ԿԱՐԱՊԵՏ.**—*Ի՞նչ ես ասում, աղջիկ Շահո, քիթ ու մոռեթդ ջար-  
դող չկա, կատգիլ ես:*

**ՅԵՐԵՄ.**—*Խի: Ի՞նչ եմ արե, վոր իմ քիթ ու մոռեթը ջարդեն:*

**ԿԱՐԱՊԵՏ.**—*Բա Սեթիկի կուզն ռւմ արածն ե: Խի՞ չես երեխին  
մորը տալիս:*

**ՅԵՐԵՄ.**—*Կուզը հո լես չեմ շինել, Աստու տվածն ա:*

**ԿԱՐԱՊԵՏ.**—(Ականջ տանելով): *Գրքիցն ել լավ բան: Ուրախ, կա-  
ս'ա մուրաղատու ծառ լինի, մարդու կյանք կանաչեցնում ե:*



ՅԵՐԵՄ.—Անտեր ֆնա կուզը: Մարդու ումբրի՝ հետ գնում, մարդու խախտառակ ա անում: Մեր հերը մեզ թնչ ա տվե, վոր Սեթիկին լիս թնչ տամ: (Չարացած, հուսափափ): Ախր ասա՝ տեսնամ, թնչ ա տվե, ե: (Մոռալ) Փալասի կտորից շինած աղբատի տուրիկից բացի թնչ ա թողել, վոր պցում ես վրդդ: Այ, անդուտքն բսենց կըլի հո: Դու հլա—կո՛ւղ, հա կուղ՝ առել-անցել ես:

ԿԱՐԱՊԵՏ.—(Ապշած նայում է Յերեմին):

ՅԵՐԵՄ.—Թե չես ուզում վրդդ առնել: (Գնում է անկյունը՝ յերեսային վաքաքելու):

ԿԱՐԱՊԵՏ.—(Չեմբեր Եարժելով) Յերեմը մեկ էր, լերկու դարձավ: Մեկի մարմնի վրայինը գլուխ է, մյուսինը՝ գինու գոգրա: Իսկի չես հասկանում, թե թնչ է: (Շարունակում է կարդալ):

ՅԵՐԵՄ.—(Քնած յերեսային անկյունը դնելով, հագալով ու առխտսելով՝ մեղմ) Կարապետ, Կարապետ:

ԿԱՐԱՊԵՏ — Հեռո՛:

ՅԵՐԵՄ.—(Չիմանալով, րե ինչի՛ց սկսի) Յես, մենք... Ուզո՞ւմ ես, արի, վոնց են ասում, դուզը սրտով խոսենք, լիս ել, ախպեր ջան, դու լել:

ԿԱՐԱՊԵՏ.—Երկուսով ել պողվոր ենք:

ՅԵՐԵՄ.—Լավ, թորկը տուր, Կարապետ ջան:

ԿԱՐԱՊԵՏ.—(Նայելով նրա աչքերի մեջ ու գլուխն որոելով, լուրջ) Յերո, կասես քեզ մի բան պատահած ըլի:

ՅԵՐԵՄ.—(Յավալով) Կասես բերնիս խուփ են դրել, շունչս կտըրվում ա, չեմ կարողանում նափաս հանել: (Մոռալ) Վատ բաներ են մտքովս անցկենում, հալս խարար ա:

ԿԱՐԱՊԵՏ.—(Մտնում է իսկից լուրջ) Յերո, հարկ ել կոխ տուր, հանգիստ կաց:

ՅԵՐԵՄ.—Թե չես ուզում եմ ել... բայց նրանք ձեռ չեն քաշում:

ԿԱՐԱՊԵՏ.—Թե դու, թե չես, երկուսով ել մի պտուղ չենք:

ՅԵՐԵՄ.—Պրծա՛ր: Այ, հենց դրա համար ել չես քեզ սիրում եմ, ամա թարս վախտս մոտ չգաս, թե չե՝ կողանեմ: (Ասես ինքն իրեն նարցնում է) Բա թնչ: (Պառկա) Տղան ել, Մարուշն ել, մեկել-մեկելներն ել (ցույց տալով կուրծքը), սաղ ել եստեղ են: Սաղ ել ափսոս են... Ամա... (Չայնը կտրում է) Կարապետ ջան: Մարդու չա-ասես, ես ել նոր ա պատահել: Կասես կնիկ եմ դարձել:

ԿԱՐԱՊԵՏ.—Ինչո՞ւ չես եզպես դարձել վոր:

ՅԵՐԵՄ.—Իսկի լիս էլ չեմ իմանում: (Պաուլոս) Մենակ մի բան.  
մարդկանցից վախենում եմ, նրանք (ցույց տալով կուրծքը)  
մտել են ետեղ ու ճխլված գորտի պես կը՛ռ-կըռ... (Խնձր  
ժնշում է) Դիշերները չոլերն եմ ընկնում, շան ու գիլի պես  
ոռնում եմ, Կարապետ ջան:

(Ներս և մտնում Խաչոն):

ԽԱՉՈ.—(Դուան մոտից) Ես ել մենք, Յերեմ բեկ: Բարձով, Կարա-  
պետ (Կարապետի վրա): Մուլթախոն, ըղնց, հա՛, ուրեմն ել  
չես ուզում բազափոք գաս, հա՛:

ԿԱՐԱՊԵՏ.—Ձե, չե, չե: Ես կատվի մազերն ինչու լի եսքան կոկ-  
լիկ: Կուրծք կախել—պառկել ե կողքին (խեղում է) «Պաշոն  
նստե ակամարներին ման կգա, ման կգա. Բայց Կարապե-  
տը նրանցից չի, մտքիցդ կհանես»: (Խոսում է) Կարապե-  
տին վորտեղ հեծնես, ենտեղ ել կիջնես:

ԽԱՉՈ.—Սնու մի հաջա, սոված շուն: Եզուց փոխանդ վոտներդ  
կընկնի, ելի դու պտի գետին լիզելով դուռս գաս, դո՛ւ:

ԿԱՐԱՊԵՏ.—(Բարկացած բռնում է):

ԽԱՉՈ.—Ի՞նչ ես թքում, կեղտոտ-հարամ: Սիմոնից բան ես սո-  
վոր՞ել:

ԿԱՐԱՊԵՏ.—Ձենդ, Ջոզար: (Յերզում է).

Մեր կուլակ Խաչոն անդանակ մորթում, բան չասեք, բան  
չասեք,

Անդանակ մորթում, սաղ-սաղ ե քերթում, քերթում ե,  
քերթում...

Բայց լետի որը մոտ ե, հա... Բան չասեք, բան չասեք:

Պաշոն անփոխան կմնա, հլա դրան տես: Հա, հա, հա:

(Խոսում է) Հո, հո, հո, ինչ մաղալու բան կըլի, հա: Վզիդ  
կդնեմ՝ (Յույց տալով իր վարսիքը) Սրա համար, ա՛յ, երկու  
տարի բանես:

ԽԱՉՈ.—(Ձեռք բափամարելով) Ե՛լ, էլ, ճամպեղ ճանաչի:

ԿԱՐԱՊԵՏ.—Ձենդ Ջոզար, ձենդ, թե չե—քոնը կտենաս: (Խաչոն  
ընկնում է նրա նետիկից ու շուտով վերադառնում):

ԽԱՉՈ.—(Պաուլոսից նետ) Յերեմ բեկ, ձերոնք ո՞ր են:

ՅԵՐԵՄ.—(Կուպիտ) Քեղնով՝ սե ջահնամն են:

ԽԱՉՈ.—Քո փորն ել կշտացավ, հա՛, նուսուրաթ. քեղ հետ մար-  
դավարի լեն խոսում, իսկ դու տավարի պես ես անում:

ՅԵՐԵՄ.—(Նույնպես) Դե լավ, հա՛:

ԽԱՉՈ.—Ի՞նչ լավ հա. լիս հարկավոր բանի եմ եկել—մալըդ պարտ-  
քի տեղ ոպիս անելու,—հասկացա՞ր:

ՅԵՐԵՄ.—Թքած վրեն:

ԽԱՉՈ.—Դու հլա կթքես: Յերբ վոր մի հատ կովդ քաշի տարա-  
հն վախտը կթքես, հիմի հլա ինչ կա վոր:

ՅԵՐԵՄ.—(Ձեռքը քափահարում է) Յա դես կըլի, չա՛ դեն:

ԽԱՉՈ.—Դու չե՛լ Միմոնի կուսակցութեան կողմն—հն ավագակներէ  
կողմն ես քաշում, հոմ:

ՅԵՐԵՄ.—(Մոռլ) Ինձ համար բոլորը մեկ է: (Աղետական յե-  
ղանակով) Ողորմի հորդ, մի ստաքանի փող տաս, սիրտս  
երվում ա, փոխարենը մի որ բանատեղ կգամ:

ԽԱՉՈ.—(Շիբը գրպանից հանելով) Շուտուց պտի եղպես ասելիք,  
վոչ թե անպատվութուն անելիք: Խմի:

ՅԵՐԵՄ.—(Ուրախությունից ճեղիցը քոչելով՝ բաժակը մտնցնում է):

ԽԱՉՈ.—(Շեի բերանը բաց անելով) Միտող մի վախեցնի: Ասե՛լ  
եմ, ելի կասեմ. ես բոլորի մեղքը Միմոնի վրէժն ա, ամա  
դու, Յերեմ, ապրես, լսով ես անում, վոր մուլթախոտի հա-  
մար չես աշխատում: (Լցնում է) Բա ձերթնք ուր են, ե:

ՅԵՐԵՄ.—Հերս ջրի տեղն ա, մերս՝ իրեք որ ա, վոր ուխտ ա  
գնացել, մեր Մարուշն ել մտել ա գործկոմ՝ ազիլ անելու:

ԽԱՉՈ.—Աչքն: (Բաժակը լցնելով քափով խմում է ու շիբը մեկ-  
նում) Խմի, քեզ անուշ:

ՅԵՐԵՄ.—Բոստան ա գնացել: (Վերցնում է, ձեռքերը դողում են.  
ինչ վոր փրկարարում ու խմում է. շնորհակալությամբ անելով  
վրան քափելով, բերանը չպղպցնելով ու շարունակեք լիզելով):

ԽԱՉՈ.—Միմոն:

ՅԵՐԵՄ.—Նուենիկի հետ գնացել ա գործկոմ:

ԽԱՉՈ.—Ստորագրելո՛ւ:

ՅԵՐԵՄ.—Ո՛վ ա իմանում, վաչ թե: Առավոտվանից բերել ասում  
եյ՝ «Նուենիկ, հիմա մենք մեր ասածի տերն ենք»...

ԽԱՉՈ.—Ա՛հա: Հիտո՞, բա հողարածանութեան մասին բան չա-  
սաց:

ՅԵՐԵՄ.—Նրա համար մեկ ա. հող ել ունի, ջաղաց ել ունի, կաղ-  
մակերպութիւն ել, մեկել-մեկելն ել: Հլա ուրիշ բաներ ել,  
իսկ լիս վոչ մի բանի տեր ել չեմ: Յես՝ լիս եմ, իմացածը  
(Յեկ հանկարծ կոկորդավը մեկ սկսում է յերգել):

«Պաշտն խրիդ եր գնում,

Յերոն բոպիկ եր մնում»:

(Աչոն ներս է մտնում):

ԱՉՈ.—Յերեմ, քո խիղճը մեռնի, եդ ինչո՞ւ լիս խմում: Ինչի՞ցդ ես  
արխելին:

ՅԵՐԵՄ. — Ե՛հ, տանը մնացած: (Նույնպես գետինը դուրեկով) Փո-  
ղորիցս, արիւնդին եմ, Հուրիխանին ել կառնեմ: (Պառլաւ):  
Մարտոշ, նստեղ արի, լիս հստեղ եմ... (Այնն ցերեմոնի սանոււ  
ե դեպի աջ):

(Ներս ե մտնում Ոնանը):

ՈՀԱՆ. — (Խորը գլուխ տալով) Իմ գլխին. իմ լերեսին, դու բարով-  
հաղար բարին ես եկել, իմ տուն ու տեղը քեզ փեշքաշ ա:  
Դու ինձ բռնով լավութեն ես արել, ահա՛ քա իմ ահա՛ քա  
վտոյ մեր տունը պիտի: Եղ վճար որիցն ա վճար քամին բերեց:

ԽԱՉՈ. — Հնդկոր, դու ախոս ես, քեզ մեղքս գալիս ա, ամա ել  
Սիմոնի արածը չի թողնում, վոր պարտքդ լիս պցեմ: Չտա  
ել, կովդ կտանեմ:

ՈՀԱՆ. — (Անգոր չոգում ե պաշի տակ):

ԽԱՉՈ. — Մի՛ կով ե: (Դուռն ե):

ՈՀԱՆ. — (Այս փաշով) Եղ մեկն ա:

ԽԱՉՈ. — Դո՛խար չունե՞ս:

ՈՀԱՆ. — (Այս փաշով) Չե: (Ու հանկարծ հաստատել կերպով վոսֆի  
յե կանգնում) Կովը չեմ տա: Թող ել կրակեա՛ չեմ տա:  
(Կծկվում ե ասես պաշտպանւթյուն ե վնասում) Նրա համար  
վոր, վճար տամ: Իսկ աստու, ալ հարեաններ, ալ բարե-  
կամներ, մի ճար արեք, իմ ուժող տալովն, մեկ ու ճար  
ղըղըլը՛ ա: (Գլուխ տալով) Պարոն Խաչո, իմ աստվածը դու  
լիս, ողնիր, աղատիր, ուզում ես՝ քանի սաղ եմ, տանով-  
տեղով քեզ համար աղոթք անենք, թաք ըլի՛ աղատիր մեզ,  
թե չե հողեց-հողի կորած ենք: (Խաչոն լուռ ե): Ուրեմն կո-  
րանք:

ԽԱՉՈ. — Կորելը ձեզի տեղն ա: Հալիվոր, ես բոլորը քո անխել-  
քութիւնից ա, կապը ձեռքիցդ բաց չթողնելի: Հենց ես-  
պես ասենք. Սիմոնի արածն են ի՛նչ ա: Աշխարհն իրար  
ա խառնում: Աչքը տնկել ա խալիխ մալին: Յես ամեն ժա-  
մանակ քեզ ողնել եմ, բայց Սիմոնի արածներին համար — ծը:

ՈՀԱՆ. — Այ իմ աչքի լուս, բայց նրա վրա կարենում եմ: Ա՛խ:

ԽԱՉՈ. — Դե վոր չես կարում, չես, բայց չե՛ լավ մարդկանց ասածն  
ել ա լիւր: (Այս ու այն կողմի նայելով): Ես իրիկուն արի՛  
կիսոսենք: Եղ ամաղակին մի ճանի վերցնենք: (Ինչ վոր  
փախում ե) Նրան կանչի գա, Աչոյին, ել հողը կանչի:

ՈՀԱՆ. — Աղջի, Աչո՛, շուտ արա, մի նստեղ արի:

(Այնն ներս ե մտնում):

ԱԶՈ. — Ի՞նչ ես ասում:

ՈՀԱՆ. — Կգնամս պարոն Պաշտենց տունը բան անելու:

ԱԶՈ. — Առանց ինձ ել չերկու քոժ, մի նոքար ունի:

ԽԱԶՈ. — Ահո, ասա տեսնեմ՝ հոժածը ես, թե չե՛: Բայց զուր տեղը  
թամբալութուն մի անի:

ԱԶՈ. — Յես թամբալութունից պատուում եմ:

ՈՀԱՆ. — Բա, բա՛: (Աչոյի գլուխը շոյելով) Ենքան աշխատասերն  
ա լո՛ւր:

ԱԶՈ. — (Կոպիտ) Հախի համար վոր դեմ չընկնես, երկու մարդու  
բան կանեմ:

ԽԱԶՈ. — Հախի կողմից չեմ զրկի: Ե՛հ, հալիվոր, պարտքը հլա թող  
մնա: Իրիկունը կգաս հա՛: Յես գնացի:

(Խաչուն դուրս ե գնում):

ՈՀԱՆ. — Դու հլա չովաշ, Աչո՛, չես քո միտը կպցեմ, հլա մի սարք  
արա՛:

ԱԶՈ. — Ի՞նչ պտի գցես միտս:

ՈՀԱՆ. — Են, վոր լեզուդ հո՛ չեր լալանա, ասելիք—կգամ ելի, թե  
վոր դու հակառակ չեցիր:

ԱԶՈ. — Հաշիվը մեկ չի՛:

ՈՀԱՆ. — (Տնոգն անելով): Դուրս ա գալիս, վոր չես հե՛շ, դու քե-  
զի-քեզի չես գնում բանելու: Լի՛րբ անգգամ:

(Ներս ե մտնում Մարանը)

ՄԱՐԱՆ. — Բարե ձեզ: Ասու լողորմութենը հասել ա: (Նսում ե)  
Ո՛հ, բեզբեկ եմ, ասում ի՛ ել չեմ հասնի:

ԱԶՈ. — Դու չել հավես ունե՞ս, եզ Ֆալչի Սառան-Մառանի մոտ ես  
գնա՞նք:

ՄԱՐԱՆ. — Ձենդ կտրի, մեղ-խուզած: Հալիվոր: Դու չել, Աչոն ել  
սգնեք: Բոլորը, բոլորը Նունիկին հակառակ են: Նրա իզ ու-  
թողը մեր տունը չպտի մտնի: Սիմոնին չես եղպես ել պտի  
ասեմ:

ՈՀԱՆ. — (Ձեռքը քափահալելով) Ուշացել ես: Առավոտվանից ե  
բերել: Ասում ե՛ իմ կնիկն ա: Վախեցի, վոր մեզ տանից  
դուրս չանեն:

ՄԱՐԱՆ. — (Մեկնեիցն տալով): Վա՛յ, իմ տունն աժրավ, հալիվո՛ւր,  
ըտենց ել ըլելու չե: Սառան ըաջին ասում ա—անբախտու-  
թեն՝ անբախտութենի լետեից, փորձանք՝ փորձանքի լետեից:  
Ա՛խ, վա՛-ախ: (Ի՛նչ վար փափսում ե Ոհանին):

ԱԶՈ. — (Իկալի լուսամուտը) Կարապետ: (Կարապետի ձայնը՝ «Նա  
եսեղ չի, յես եսեղ ե՛մ» )

ԱԶՈ.—*Երեխեն ձւր ա:*

(Կարապետի ձայնը: «Յերեմի'ց հարցում, ծիծ սվողն են եր: Յալա': Մեր մանդրները բոսան են գնում: Այ, նրանք: Եյ, մանդրուց»):

ԱԶՈ.—*Յերեմ, երեխեն ձւր ա: (Դնում է դեպի աջ ու Յերեմի հետ խօսույն վերադառնում է):*

ՅԵՐԵՄ.—(Աչքերը արեւոյ) *Ի՞նչ ա կորել, Սեթիկը: Են քնջում գրած ա, է: Քնած ա:*

ԱԶՈ.—(Անհանգստաբար փնտրում է ցնցոսիները): *Մեռել ա, մեռել ա, խեղդվել ա. —է, վա-ճի:*

ՄԱՐԱՆ.—(Ննկներին ե տալիս) *Տեսա՞ր, տեսա՞ր, տուտը բացվեց, կասես եղպես ել գրած ըլեկին: Կորանք: Մեր մեղքից: Մեր մեղքից:*

ՅԵՐԵՄ.—(Յերեմիային առնելով) *Ձե, չե: Սեթիկ, բալիկս: Ձեմ թողնի (Մեղմ) «Վու-ճւլ, վու-ուլ... նանիկ, (նանիկ արա»:* (Համբուրում է ու գնում է դեպի աջ):

(Ներս է մտնում Սիմոնն ու Նունիկը):

ՍԻՄՈՆ.—(Զգալով, վոր մի բան պատահել է, մեղմ ու կես-կատակով), *Մարիկն եկել է: Սառանը վճնց է: Լալիս էս: Ինչու համար: (Պառկա): Քուլքիկ, ճաշել եք: Մեղ ել հաց գիր: Շատ սոված ենք:*

ՈՀԱՆ.—(Վուպիս) *Ձեզ հաց չկա:*

ԱԶՈ.—*Ըսկի չե՝ առաջի որն ել ա մարդութեն արեք, հա:*

ՄԱՐԱՆ.—*Կորի, կորի աչքիցս, գորշիլի, կորի՛ ուղ ելի, երեսդ չտեսնեմ: (Նունիկին) Դու-լել, անտեր շուն-շան աղջիկ: Ռադ ելեք, աստու անեծքը թափի ձեր գլխին: Մեր տունը մի հարամեք: Հովիվոր, խոկի, թող կորչեն:*

ՍԻՄՈՆ.—*Այ մեր:*

ՆՈՒՆԻԿ.—(Բռնելով նրան, աղեսագիւն) *Սուս կաց: (Բռնի հետևից Յերեմի վայրենի աղաղակները: «Նեն-հե՞, ե-հե-հե՛լ», Հաճախ ծուրացնելով՝ «ե, ե-ե՛, ե-ե-ե՛, Յերեմի եք կորել ե՛, ե-ե-ե՛»):*

ՍԻՄՈՆ.—(Նայում է Նունիկին. սա վախեցած՝ կպել է իրենից: Սիմոնը գրկում է նրան):

ՎԱՐԱԳՈՒՅՐՆ ԱՐԱԳ ԻՋՆՈՒՄ Ե՛

## ՅԵՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

ՆՈՒՆԻԿ.—(Նստած կար եւ անում)

ՈՂԱՆ.—(Խմուր եւ հունցում):

ՄԱՐԱՆ.—(Հիվանդ անկողնում պառկած եւ, Նունիկին) Բնդ: Քո  
երեսիդ արուռ հալա չկա, հլա տունս չմտած, պտի ցրթես:  
Դու մեր սող տունն իրար գլխով տվիր: Բա ըսկի լսած  
ու տեսած բան ա, վոր հալիվորն ինքն իր ձեռքով խմոր  
հունցի:

ՈՂԱՆ.—Ձեռդ կտրի, պանա՞վ, հլա ուր էս, մեծ եղն ախոսին ա  
գոռւմ:

ՄԱՐԱՆ.—Եհ, հալիվոր, սիրտս պատուվում ե:

ՈՂԱՆ.—Մենք հլա հեչ, ինչքան կնիկ կա, սաղ իրար ա խառ-  
նել: Համա շատ չի կարա մանգղիլ կտրի: Մոտ ա, հա-հա,  
մոտ, գլուղացիք գլխին ընենց սե «կինրաժին», սե «հալա-  
սարութեն» բերեն վճր:

ՄԱՐԱՆ.—Մի քար կապեն վիզն ու գցեն ջուրը, վոր եղ շան  
ծնունդի ֆոտն ել չգա:

(Կարապետը ներս ե մտնում):

ԿԱՐԱՊԵՏ.—(Դուան մտից՝ հոր) Հայրիկը թթխմոր ա շին՞ում:

ՄԱՐԱՆ.—Կարապետ: Ֆրանգ: Աման, տիրամեր:

ԿԱՐԱՊԵՏ.—(Յերգում ե): «Տիրամեր, հավարիս հասի»:

(Ներս ե մտնում Սիմոնը):

ՍԻՄՈՆ.—Հայրիկ, ելի դ՞ու յես խմորը հունց՞ում: Ինչ՞ու, եղ քո  
գործն է:

ՈՂԱՆ.—(Մալրելով): Սրտացավին տես: (Կուպիս) Սրիկա, քո եղ  
փշացածին սորվեցրու, սորվեցրու: (Կարապետին) Շուտ ա-  
բա, արի ձեռների: ջուր ածա: (Գնում ե դեպի աջ):

ԿԱՐԱՊԵՏ.—(Հետեվիցը գնալով, Ոհանի յեղանակով): Հերը յես ը-  
կմ, ընձի բան սովրացնէն: (Բռունցքով խփում ե իր կրծ-

Բիւն)։ Յետ իմ հւմըրը քոռ ու փուշ անեմ, վոր վերջս ել հստեղ կաշնի։ Չեմով, բալամ, դու փուշ ես, անպետք ես։ (Գնում ե հոր յետնվից)։

ՆՈՒՆԻԿ.—Միմոն, դու անխելք ես, չեն ուզում, վոր չես անեմ թող չուզեն։ Մենակ մի բանը լավ չի, վոր նրանք անտեղի ինձ խալտառակում են։

ՄԱՐԱՆ.—(Չարացած)։ Հը՛, գանգատովի, գանգատովի, պիղծ փչացած։

ՍԻՄՈՆ.—Թարկը տո՛ւր, ալ մեր (Նունիկին) Սրանց ասածը բանի տեղ մի գնի։

ՄԱՐԱՆ.—(Անկողնից դուռն ե գալիս, պատը բռնելով՝ գնում ե խորանոց, խոսում ե արցունք աչքերի ու չարացած)։ Կորի, աչքիցս ուող ելի, ավազակ։ Բոլորիս, բոլորիս դու ծախեցիր։ Աստված քեզ լավ որ չի տա, չի։ Բալքի շան սատակ ըլեք։ Բալքի տենամ դուք անդուզքն իջնեք, հա՛, անիծված բալլըսկիներ։ (Գնում ե դեպի աջ)։

ՆՈՒՆԻԿ.—Ինչքան ել ղոխակալ մարդիկ են... Մարդ քանի ձեն չի անում, սուտ քասուկթուռն ե գնում, միտք ե անում, թե հին, փտած մարդիկ են,—խոսքը չվանի վրա չդնենք,—ելի չի ըլում ու չի ըլում, մարդու համբերութիւնն հատնում ե։

ՍԻՄՈՆ.—(Փառաքվելով)։ Պետք ե համբերել։ Շատը գնացել, քիչն ե մնացի։

ՆՈՒՆԻԿ.—Յետ իմ դարդը չեմ։ Մի հալելին առ—չերեսիդ նալի, տես թե ի՞նչ որն ես ընկել, կասես մեռել ես դարձել։

ՍԻՄՈՆ.—Յետ չերբեմն ենպես վատ եմ զգում, ինձնից վախենում եմ։

ՆՈՒՆԻԿ.—(Հուզված)։ Սիմոն։

ՍԻՄՈՆ.—(Հաստատուն)։ Թարկը տո՛ւր, դատարկ բան ե։ Դու ինձ հետ ես, չես կոտոր չեմ ընկնի։ Ասամ ատմի տուր, խեղդովի, թաք ըլի՛ նրանց ասածը մի արա։

ՆՈՒՆԻԿ.—(Համբուրելով)։ Դրա համար ել քեզ սիրել եմ։ (Կասակով) Գոթոթ ջան, մենք բա հո իրար չե՞նք խաբել։ Ա՛յ, մեր սերը, տեսնում ես, ելի։

ՍԻՄՈՆ.—Մեկ տեսար՝ մեղրից ել քաղցը ե՛, մեկ ել տեսար՝ թանից թթու չե։ (Փառաքվելով) Յեթե չես չիմանայի, վոր դու իմ ընկերն ու ոգնականն ես, դեռ չեյի կարգվի։

ՆՈՒՆԻԿ.—Գիտեմ։ Յետ ել քեզ պես։ Ու՛հ, քոթոթ ջան (Համբուրում ե)։

ՍԻՄՈՆ.—Ձեռ վախենում, վոր սերս սուտ դուրս գա:

ՆՈՒՆԻԿ.—Ձե, Սիմոն ջան:

ՍԻՄՈՆ.—Ուրեմն, դոչազ էս (Համբուրում ե) ե, բա վոր լեռ  
երկու շարթից հետո երկման գնացի՝ առվի կամուրջները  
շինելու համար երկաթ ու ցեմենտ բերելու ու հարուստ  
աղջկա լետեղից ընկած, վոնց պտի անհո:

ՆՈՒՆԻԿ.—Պառավի, հա՛: Աչքովս ել տեսնեմ—չեմ հավատա:

(Ներս ե մտնում Կարապետի):

ԿԱՐԱՊԵՏ.—(Դռան մոտից): Կարապետը մեջի միջով գնում եր,  
դուրս եկավ հանդի մեջ ու մեկ ել են տեսնենք՝ չորս կող-  
մից գալիքը վրա թափվեցին: Կարապետը թուով ցանկա-  
պատի գլուխը, նստեց, մտիկ արեց ու մտքի լետե ընկավ:  
Աչքերը չորս արած՝ տնողում ե հագլիվ-հագ... (Ավելի յե  
մտնելում ու կամաց) Սիմոն, լեռ թագուն մտիկ արի, ֆալ-  
չին ելի մալրիկի գլխին կարկտի պես պտպլտում եր: (Նու-  
նիկին) Կինբաժին, դու լեկ իրկունը տանից դուրս չգաս:  
Գլուղացիք կսպանեն:

ՍԻՄՈՆ.—Հիմա զգուշ կաց, գլուղացիք փոստդ վարման կճխտեն:

ՆՈՒՆԻԿ.—Ումնից իմացար: (Բեռի յետվից Յերեմի հաբաժն աղյուր):

ԿԱՐԱՊԵՏ.—Մեկ չի՞, թե ռեմից եմ իմացել: Քեզ տուում եմ՝ մի  
գնա—մի գնա:

(Յերեմի ներս ե մտնում):

ՅԵՐԵՄ.—(Դռան մոտից): Ե՛: Սոված ախպրտանք, հլա վոր  
սիրվեք, սիրվեք, աստված վերջը բարի անի:

(Ներս ե մտնում Ոհաննի):

ՆՈՒՆԻԿ.—(Սիմոնին ինչ-վոր փսխում ե, նրա ձեռքից բառում ե,  
դուրս են գնում):

ՈՀԱՆ.—Հակո՛ւ: Ելի փորը կշտացավ: Աչքը մի գլուխ քուչին ա:

ՅԵՐԵՄ.—(Բորբոխելով): Պտի ուտեմ, պտի խմեմ, պտի ման  
գամ, առաջ կսկծու, հիմի լիլ՝ ուրախությունից: Հա հա, հա:  
Կասես ազատ արծիվ՝ ըլեմ: Մարուշի կապն ել վզիցս լետ  
եմ արել, դեն գցել:

ՈՀԱՆ.—Վա՛նց թե՛ լետ ես արել:

ՅԵՐԵՄ.—Ենպես, հոժար կամքով բաժանվեցինք: Հա, հա, հա,  
ստորագրություն տվի՝ վոր երեխա ծնվի, ամսական իրեք  
ռուբլի տամ:

ՈՀԱՆ.—Վճրտեղից պտի տաս:

ՅԵՐԵՄ.—Տնախությունից: Տերը դու լես, իմ ի՛նչ գործն ե:

ՈՂԱՆ.—Թալանչի շուն-շան վորդիներ: Ձեր կաթը... Բոլորդ եւ  
թալանչիներ եք: (Գնում ե: Կարապետը գնում ե Ոհանի յե-  
տեւից):

ՅԵՐԵՄ.—Կորապետ, արի հասեղ:

ԿԱՐԱՊԵՏ.—Ռոդ ելի:

ՅԵՐԵՄ.—Արի—քեզ ասում հմ, չեմ կովի:

ԿԱՐԱՊԵՏ.—Կովել հս թե չե, քարը զլխիդ կտամ, կարաս կովի,  
գել ու գազան (Դուռն ե գնում):

ՅԵՐԵՄ.—Եղպես, սպրիս: (Պառլա): Եղ Սիմոնը չի վոր .. Սի-  
մոնին մի հատ շապաղանեմ, հերիք ե: Շունը շան թաթ չի  
ծամում, ամա մենք—մարդիկ շնից ել փխ ենք: (Վայրե-  
ցաբար) Վա՛ս ենք: (Ներս ե մտնում հաշտ):

ԽԱՉՈ.—(Դռան մոտից): Սը՛ս, ձեն չանես: Դու մենակ ես:

ՅԵՐԵՄ.—Մենակ հմ: Ելի բան սովորացնես, հա: (Աչքերի մեջ  
նայելով ու ծանր լինելով): Վա՛նց հս ասում—Սիմոնին սախ-  
տեմ, թե բանֆոքի անեմ:

ԽԱՉՈ.—Ի՞նչ ես հաջում:

ՅԵՐԵՄ.—Ախմախ չեմ—հասկանում հմ: Գիտեմ՝ վորացավդ ի՞նչ  
ու: Գինն ասո ու բուռս դիր: Դե:

ԽԱՉՈ.—(Դեպի աջ նայելով, նստում ե սուփրի կաղբ, շիւր դնում  
ե սուփրին): Յերեմ բեկ, խնդրեմ նստես: Բայց մի քիչ կա-  
մաց:

ՅԵՐԵՄ.—Կակդես՝ կուտես, վաղուց պտի եղպես արած ըլիքի,  
վոչ թե ուշանալի: (Շուրջը նայելով) Սիմոնը մտքին դրել  
ա եղուց չե մյուս որը երեսն գնա, ուրեմն չպիտի աչքա-  
թող անենք:

ԽԱՉՈ.—Բա, բա: (Ականջ ե դնում, արագ մտեցնում ե լուսամու-  
տին): Գալիս են: Գնանք բակովն անցնենք բախչեն (Գնում  
են դեպի աջ):

(Ներս են մտնում Կարապետն ու Մուկուչը):

ԿԱՐԱՊԵՏ.—(Համոզելով): Մո՛կուչ, քարը գողցող թափի, արի  
գնանք: Հիմա առաջվանը չի, չունեորենք պատիվ ունեն:  
Խաչատուր Արովյանը 1000 վերստ գնաց, մենք 400 գնանք-  
նա մենակ եր, իսկ մենք՝ չերկսով: Արի գնանք:

ՄՈՒԿՈՒՉ.—Ձե, զուր տեղը մի կանչի, չեմ գա:

ԿԱՐԱՊԵՏ.—Փչացած: Յես, լես: Սուսանից կարենեմ ես ձեռ  
քաշի վճր:

ՄՈՒԿՈՒՉ.—Սիմոնը մեջտեղ չըլիւ, ձեռ քաշելը հեշտ եր:

ԿԱՐԱՊԵՏ.—Նա քեզ ինչ կարող է անել վոր:

ՄՈՒԿՈՒԶ.—Նրան ել, Նունիկին ել վաչ թե սպանեն:

ԿԱՐԱՊԵՏ.—(Հաստատուն): Դիտեմ, վոր կսպանեն: Ուզում ես,  
վոր քեզ ել սպանեն, հա:

ՄՈՒԿՈՒԶ.—Այո, չեթե բանն ենտեղը հասնի, թող մեկտեղ սպա-  
նեն: Բայց թե, ո՞վ ումը, եզ դեռ ստոցի վրա չե գրված,  
վարդաւառին կկարդանք: (Հուզվելով) Կարապետ: Չիինի  
թե հանաք-հանաք թաղա առու հանենք: (Գրկում է) Այ  
ջանում, ինչո՞ւ չես բարկանում, գնում ես—մենակ գնա:

ԿԱՐԱՊԵՏ.—Պահ, դե ասա՝ զարմացրիր, ելի՛ կգնամ, մենակ ել  
կգնամ:

### ՎԱՐԱԳՈՒՅՐ

## ԶՈՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Վարագույրը բացվելիս Մարանն աղօթք է անում: Բեմի յետևից գալիս է Կարապետի ծայնը: Նա յերգում է:

ԿԱՐԱՊԵՏ.—«Տիկն տիկն, բերդենի, տարալ տիկն, բերդենի. խաչոյի գլուխը քաջալ է»: (Շարունակելով ձայնակցել, փողոցից գալիս է խաչոյի ձայնը. «Դու հլա մի սպասի, չես քողողելը փողոց լցնեմ, փորդ»): (Կարապետ դեպի լուսամուտը) Են մուտտառ տերտերակինն իմ արունը ծծեց:

ՄԱՐԱՆ.—(Աղոթքը շարունակելով): Կարապետ, շուն-շան տղա:

ԿԱՐԱՊԵՏ.—(Նույն յեղանակով): Մայրիկ, Փայլու աղջիկ:

ՄԱՐԱՆ.—Վալ դու գետինը մտնես:

ԿԱՐԱՊԵՏ.—(Նույնակալ): Այ, տենամ դու կարգով սովորես:

ՄԱՐԱՆ.—(Ձեռները վեր բարձրացնելով): Ով սուրբ Մարիամ մայր աստվածածին, իմ մեղավոր բերնով եմ խնդրում, հավարիս հասի:

(Ներս է մտնում խաչոյի):

ԿԱՐԱՊԵՏ.—(Նկատում է, բարձրանում է լուսամուտը: Բեմի յետևից յերգում է):

«Տերտերը ժամին ծունդը է դնում,  
Խաչոն տերտերի տունն է գնում»:

ԽԱՉՈ.—Ի՞նչ սատանա բան ա, որը մի բան սարքում ա: Մայրիկ, լսում ես:

ՄԱՐԱՆ.—(Ցավակցությամբ): Բա չեմ լսում, լսում իմ:

ԽԱՉՈ.—Միշտ եզ փչացածը ժողովրդի մեջ խախտառակ է անում: Ցերեկը մենակ, իսկ դիշերները մե նախիր լանգ ու լավագ հավաքում ա գլխին ու ենպես են ձենները գլուխները գցում, վոր մազերդ բիզ-բիզ են ըլում—քիչ ա մնում՝ ինչ-քան նարեկ-մարեկ, ավետարան-մավետարան կա—մարդ տնից դուրս հանի:

ՄԱՐԱՆ.—(Ձեռքերը շարժելով): Ե՛սպես ել մի պոչը կտրած ֆը-  
րանգ կըլի՝ բն: Թող հլա մի տուն գն, նրա աչքի լուսը  
կհաննեմ: Իմ ումն ել վոր չաղթի, հալիվորին կաղաչեմ:  
Մենք նրան կապի կրերենք:

ԽԱՉՈ.—(Ձեռքը քալիս հարկելով): Ավելի լավ է՝ նրա հետ մարդ  
լող գնա, թե չէ՝ ես քանի որը լես նրա աղանջները քա-  
շեցի, նա ալիկի կատղեց: (Առնուսակից վարսիկը հանելով ու  
մեկնելով) Առ, թող ուրախութունով հագնի, բարով մաշի:  
Կասես, թե Խաչոն ասում եր, վոր վրես չծիծաղա, մի շա-  
պիկ վերադիր կստանա:

ՄԱՐԱՆ.—(Գլուխ տալով): Շնորհակալ եմ, Խաչո ջան, տե՛նա՝  
նա մի ա քաշել եղ չեթիմ շունը:

ԽԱՉՈ.—Սե շանը, բալաք թուլին: Քեզ ասա, քեզ: Միթամ նրո  
գլխինը բիշ ա, մի կողմից ել Սիմոնն ա սրում-սարքում:

ՄԱՐԱՆ.—(Յավակցուրյալ): Գիտեմ, գիտեմ, թողղը Սիմոնը՝  
լաչառն ել մե գհից:

ԽԱՉՈ.—Իմ տեղ ով ըլեր, եղ իրեքի ձեռից հիմի սաղ-սաղ պատ-  
ռել եր, ամա լես նրանցից չեմ: (Ձեռքով ծնկներն է ծեծում)  
Տեսնենք՝ ռեմ մերը տղա կրերի: (Պառլա) Ձեզ հետ ելի  
առաջվա պես կռիվ ե անո՞ւմ: Սիմոնն ե՛ր:

ՄԱՐԱՆ.—(Ձեռքը քալիս հարկելով): Ել մի ասա, թուր ու դանակ  
ենք, թուր ու դանակ:

ԽԱՉՈ.—(Ձեռքերը շարժելով): Լնվ, լնվ: (Պառլա) Ե՛լ հե՛լ, բա  
չե՛ս ասում, թե ինչի լես չեկել, հը՛:

ՄԱՐԱՆ.—Ի՞նչ իմանամ, ո՞վ քե դուրբան:

ԽԱՉՈ.—(Մտնում է խփելով Մարտի ուսին): Յես, պտուղներին,  
ընենց, ելի... Յես... Կարճ ասած, լես ու Աչոն համարչա  
համաձայնվել ենք:

ՄԱՐԱՆ.—(Ուրախացած): Բա ըղորդ ես ասում:

ԽԱՉՈ.—Բա սուտ եմ ասում, մնացել ա մենակ հարսանիքը:

ՄԱՐԱՆ.—(Խաչակցելով): Ասոված ձեզ կալեց կալ սեր տա:

ԽԱՉՈ.—Շնորհակալ եմ, զո՞քանչ:

ՄԱՐԱՆ.—Գիտե՛ս, լես ելի Աչոն կրակե շապիկ հագցրել, թե  
գնա, հա գնա:

ԽԱՉՈ.—Մեկել եմ շնորհակալ: Քանի կարաս՝ աշխատի, լես քա-  
նի սաղ եմ՝ չեմ մոռանա: Յես են մեկեխներից չեմ: Բարի  
մարդ եմ:

ՄԱՐԱՆ.—Իե ասա աչքալուսանք ա, ելի, Խաչո ջան:

ԽԱՉՈ.—Մենակ մի բան, Սիմոնիցն եմ վախենում: Աչուի բելի-  
նը պտի մտցնի, թե նա ծեր ա, տիրութիւնու հետ ա, ել ինչ  
գիտեմ՝ ինչ:

ՄԱՐԱՆ.—Հլա թող մի ճնկորթ հանի, մենք նրա վրեն սե  
կրերենք:

ԽԱՉՈ.—Աչուին կասես, թե են վոր տիրութիւնու և ուրիշ կնա-  
նոնց հետ եր, են վախալը հարութիւն եր անում, ողորմած  
հոգի կնկանը չեր սիրում:

ՄԱՐԱՆ.—Հալբաթ վոր, լավի տերը լավի լետեից չի ընկնի:

ԽԱՉՈ.—Ի՞նչ լավ, պառաջների, պառաջների: Աչոն, վոր շատ ա  
իմ դուրն եկել, Յոնջի պես թաղացա: (Ձեռքի ավով նակա-  
սիկն ցալով) Իսուն տարի տավրի լետեից եմ ման եկել, ի-  
սուն տարի բոյորին քերթել, խարել եմ, գլխավորապես  
ինձ—իմ հոգին: (Ուշի գալով) Ի՞նչ եմ ասում: Ականջ հա-  
նես: Յես հենց ենպես: Յես ուրախութիւնից ինձ կորցրել  
եմ: Հասկացար:

ՄԱՐԱՆ.—Հասկացա: Մենք բոլորս ել մարդ ենք, ելի:

ԽԱՉՈ.—(Պառազայից հետ): Մարդ ենք, ամա իշի տարթ ենք:  
Եդ ա պատճառը, վոր շան պես ենք ապրում: Խոսքի ա-  
սած՝ լես ել հոգի ունեմ, ամա դու արի, Սիմոնին ասա,  
վոր իսկի բանի չի հավատում:

(Ներս ե մտնում Ոմանը):

ՈՀԱՆ.—(Գլուխ ցալով): Բարով, հազար բարի, իմ աչքի լուս:

ԽԱՉՈ.—Բարով, հալիվոր:

ՄԱՐԱՆ.—Խեբ ըլի՝ ըզհնց շուտ դարձար:

ՈՀԱՆ.—(Ձեռքը քալահաւելով): Տուր ու դմիոցն ընկավ:

ՄԱՐԱՆ.—Ելի: Քա ինչի՞ համար:

ՈՀԱՆ.—Խոսքը խոսքի լետեից: Յերեմը Սիմոնին մի հատ կպցը-  
րեց, իշի պես մի հատ ել լես լետեից հասցրի ու թավալեց  
գետին:

ԽԱՉՈ.—Տեղն ա, աթի:

ՈՀԱՆ.—Ելի ապրի Նունիկը, հավարին հասավ, թե չե՛ քիչ եր  
մուտ մեղքի մեջ կորեւինք: (Նայում ե դեպի լուսաւոսը)  
Տեսնում ես, հաղիվ ա գալիս, Յերեմը հետեանց նրան բզե-  
լով ա բերում:

ՄԱՐԱՆ.—(Արցունքից աչքերին): Փորձանք փորձանքի լետեից, Սա-  
րան բաջին վոնց ասեց, ընհնց ել դուրս ա գալիս, վնի,  
վայ, վնի:

(Ներս եմ մտնում Նունիկն ու Սիմոնը. վերջինս գունատ ե,

- կազում ե, մագերը գզգզված են: Նունիկն ոգնում ե նրան: Մոտենում են ու նստում խսիրին):
- ՍԻՄՈՆ.** — (Պատւոյից հետո): *Ջժւր:* (Նունիկն ուզում ե ջուր տալ):
- ՄԱՐԱՆ.** — (Յեռ ե մղում): *Ուր ես հարած ձեռքերովդ մեջ ընկ- նում, առանց քեզ ել ավող կա:*
- ՆՈՒՆԻԿ.** — *Քավթնո, չարահոգի:*
- ՄԱՐԱՆ.** — *Ի՜նչ, ա՛նաւեր շան զանջոյ, ունոյ ելի աչքիցս (Ձեռքը քափահարում ե):*
- ՆՈՒՆԻԿ.** — (Բարկացած): *Դե մի մոտ արի ու քոնը տես:*
- ՍԻՄՈՆ.** — *Հեռացիր նրանից, գործ չունես:* (Նունիկը ծանր շնչով՝ հեռանում ե):
- ՄԱՐԱՆ.** — (Ջուր ե տանում, բայց նկատելով, վոր Սիմոնը գրկել ե Նունիկին, ջուրը քափում ե հասուկին, բարկանում ե): *Դու իմ աված ջրին արժանի չես:* (Դնում ե դեպի աջ):
- ԽԱՉՈ.** — *Ձեզ մտիկ եմ անում, սիրտս տակն ու վրա չե անում, Սիմոն, Դու խելքը գլխիդ տղա չես, քարի տակն ընկնես՝ դուրս կգաս. ասում են Ձագում մարդ շատ ա պետք, լավ փող են տալիս, ճանապարհածախսը մի կերպ կհավաքենք — դու հեռացիր եզ փորձանքից:*
- ՈՀԱՆ.** — *Ուր գնա: Նա ինքն իրան զոռով չըխի բերան ա տալիս: Մեկ որ մեկ ել են տեսար՝ եդ ել ելավ: Դու անտեղի մեր գործը դատարան զցիր, չես կարող տանել: Իմ հողն ելի ինձ պտի մնա: Սիմոն, թքիր եդ բոլորի վրա, ու թող գնա, իսկ ճանապարհածախսի համար, ինչպես ասել եմ, եսպես ել կանեմ, կոգնեմ:*
- ՍԻՄՈՆ.** — (Մտախոհ): *Վաղոն գինա՝ իր նախիրը դու կքշա:*
- ԽԱՉՈ.** — *Ինչ ես զարագան հաջում, քեզ բան եմ ասում:*
- ՈՀԱՆ.** — *Սիմոն, պահ մտի, Յերեմը ցցի կտորը ձեռը գալիս ա (Հնոցը փակելով) Փորձանքը մեզնից պակաս չի:*
- ՍԻՄՈՆ.** — *Ճանապարհածախս ել կտաս, հա՛:*
- ԽԱՉՈ.** — *Դե ինչ արած, բարեհոգի, սրտից փուխը մարդ եմ:*
- ՍԻՄՈՆ.** — *Ելի պտի սկսի փչել. շուրուխ ես անում, գնողը չես: Ձեա կարող գնի: (Խուլ ձայնով) Հեռացի, քանի սաղ ես: (Նետր ե մտնում Յերեմի, հաչոն արագ դուրս ե գնում):*
- ՅԵՐԵՄ.** — (Դռան մոտից ցիցը Սիմոնի վրա քափահարելով): *Ընչե՛, ըստեղ ես, հա՛: (Սիմոնը վեր ե կենում, մի քայլ առաջ ե գնում, Նունիկն իրեն գցում ե նրանց արանք):*
- ՈՀԱՆ.** — (Բռնելով Յերեմի ձեռքից): *Յերեմ, խելք կաց:*

ՅԵՐԵՄ.— (Ձեռքից պրծնելով)։ Թող մի տենամ, է, չես դրա էն...

ՍԻՄՈՆ.— (Նունիկին հեռացնելով, Յերեմին)։ Պփում ես—խփիր։

ՆՈՒՆԻԿ.— (Բռնելով)։ Սիմոն, Սիմոն։ (Մարանին յեղ Ոհաննի)։

Ընչի՞ չեք գլուկներդ տնկե կալնե, հասեք, է։ Թե՞ դուք ել եք նրա ասեղը թելում։ (Աղետագին) Դուք բանի չեք—չեք, գոնե ուրիշին ել ե մի խանգարեք, է։ Մեր գլուխը ձեզ պես աղաւ չի, հասարակութեան գործ ենք կատարում։ Ի՞նչ ե զայմաղալ անում։ հրեն առաւոտը Սիմոնը գնում ա Երեան։ կարող ա պատահել շուտով առուն հանենք։ (Յերեմը հանկարծ շուռ գալով՝ արագ դուրս ե գնում։ Սիմոնը նստւմ ե քաղիքի վրա, գլուխը ձեռքերի մեջ առնելով։ Նունիկը մոտենում ե յեղ սկսում ե շոյել նրա մագերը, Ոհանը ձեռքերը շարժելով լուռ նայում ե Մարանին. սա յեղ նրան ե նայում, կարծես ասելով. «Փորձեմք վոր եկալ, առաջը չես կարա կտրի», Ոհանն ել նույնն ե պատասխանում. «Պէ՛տ գա»)։

ՎԱՐԱԳՈՒՅՐԸ ՀԱՆԴԱՐՏ ԻՋՆՈՒՄ Ե

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Ոհանր, Յերեմբ, Խաչոն սեղանի շուրջը նստած՝ թունդ հարբած են։ Յերեմբ զլուխը կախ գցած՝ քնել է։ Աչոն ոգախի վրա ինչ վոր բան է տարացնում ու ծունկ չողած՝ մխացող ոգախը փչում յեվ աչքերն ու քիթը շուտ-շուտ սրբում։

**ԽԱՉՈ.**—Ա՛նհր, ուրեմը խոսքը՝ խոսք, կիրականորը հարսանիքն ա-  
նում ենք։

**ՈՀԱՆ.**—Կիրականորը։

**ԽԱՉՈ.**—Ծախսն ի՞նչ վզին է։

**ՈՀԱՆ.**—Վճնց թե, ողորմած հեր, չե՞ վոր խոսեցինք. դու գիտես,  
վոր չես ուրախ եմ ծախսելու, բայց վոր ձեռիս չկա։

**ԽԱՉՈ.**—Յես եղ չասի, —ծախսը՝ հեչ, է։ Աչոն քո Բ՛նչն է։

**ՈՀԱՆ.**—Աղջիկս եր։

**ԽԱՉՈ.**—Ե՛դ ա, գլխի ընկար։ Դե վոր ընենց ա, դադրն իմացի։  
Բան անողի տեղ տարա, չմոռանա՛նա՝ չես ո՞վ ե-եմ, հա։ (Ո-  
րովելով գնում է դեպի Աչոն)։ Աչո՛, Դու բակի բան հասկա-  
նում ես։

**ԱՉՈ.**—Են Բ՛նչ է, Խաչո ջան։

**ԽԱՉՈ.**—Չորս որից հետո գիտե՞ս ինչ պտի ըլի։

**ԱՉՈ.**—Մեր հարսանիքը։

**ԽԱՉՈ.**—Ի՛նչ հարսանիք։ Քեֆ, քեֆ։ Ենպես քեֆ պտի անեմ,  
վոր աշխարհը դղրդա։ Չորս ձի լծած ֆայտոնով պտի ժա-  
մի դուռը պսակ գնանք։ Քեզ խանմի պես պտի դարդարեմ։  
Աներ ջան։ Ըստուց դին ել Աչո-մաչո չկա։ Ըստուց դենը՝  
Աչո խանրմ, պարոն Խաչոյի կնիկ, Իմացմբ։

**ՈՀԱՆ.**—Ա՛ղջիկս, գնա, առաջին ծունդը դիր. դու երազիդ ել եղ-  
պես հարստութեն չեիր տեսնի։

**ԽԱՉՈ.**—Ընկար մորըդ փորը։ Բան է, Ելի, աներ, սովորեցրո՛ւ,

խրատի: Բայց քոնոնցն ել մի մոռանա: (Գնում է դեպի սուվորեկ) Մեկ-մեկ ել քցենք: Աչո՛, ասում ես, թե Սիմոնն հսոր երեանից կգա, հա՛: Նրա՞ քեֆը վոնց ա:

ԱՁՈ.—Գրում ա, թե վողջ-առողջ ա, գործերը լավ են:

ԽԱՁՈ.—Յես բուրդ եմ ասում, դու բամբակ ես գզձւմ: Նա պտի իրան ուտի. դու նրան ի՞նչ պտի հասկացնես, հը՞:

ԱՁՈ.—Կասեմ, վոր առնում եմ, ուրեմն իմ բանը գիտեմ: Կասեմ, վոր իմ հոժար կամքով եմ առնում... (աւրցունքը խեղդում է նրան):

ԽԱՁՈ.—Գնանք, Աչո ջան: Կեցցես, լավ գտար: Խելո՞ք կնիկ ես:

ՈՀԱՆ.—Աչո, Աչո, սու ես քերդանը մի քիչ ել են թթու քալա-մից, պամիգոր տակտեղից-բանից դիւր:

ԱՁՈ.—(Գնում է դեպի աջ յեւ իսկույն վերադառնում դեպի դուռը, վախեցած) Սիմոնը բաղչի միջով գալիս ա: Դուք ըլեք իմ գլուխն ու արեք, զարմաղալ չանեք:

ԽԱՁՈ.—Յերեմ, Յերեմ, մի վեր կաց, շո՛ւտ արա: Խմի, քանի տալիս եմ: Աներ: Մեկս մեկու քոմակ անենք, չփախնենք, Սիմոնի գեմ մեզ կտոր չզցենք: (Յերեմին րալի է տալիս): Յերեմ ջան, հազր կաց կովելու:

ՅԵՐԵՄ.—(Գլուխը բարձրացնելով՝ մերմուրում է). Աչոյին մարդու տվինք, Սիմոնին ել տանից դուրս անենք, լսով լավ կըլլի-ի՛նչ:

ԽԱՁՈ.—(Թալի է տալիս) Ի՞նչ ես ննջում, ուշքդ գլուխդ բեր:

ՅԵՐԵՄ.—(Կոպիտ) Բա դձւ:

ԽԱՁՈ.—Դուն վորն ա, չես քեզ ի՞նչ դու, եշ ախմախ: Աներ, հասկացրու սրան, թե չես ո՞վ եմ:

ՈՀԱՆ.—(Մտառայաւորեկ) Պալոն Խաչո, ազա փեսա, մեր գլխի տեր:

ԽԱՁՈ.—Աչ, եզպես: Բոլորդ ել առաջս պտի խոնարհվեք: Բա հո՞ գուր չեմ ասում: Տնով-տեղովիդ կառնեմ, չեմ ծախի: Յերեմը մովթախոռ ա: Մտիցը գնացել ա, վոր աստու սերն եր գցում, ազաչում եր, վոր հոտաղ բոնեմ: Առա՛, հիմա չեմ դու ինձ ժուլիկի տե՞ղ ես դնում:

ՅԵՐԵՄ.—(Բուռնցով ձնկանք խփելով): Սուս կաց, է՛լի: Տանը չի:

ՈՀԱՆ.—(Բռնելով) Յերեմ, էլի չարացմոր:

ՅԵՐԵՄ.—(Յեռ մղելով) Հեռո՛ւ Յես եմ ժուլիկին (Հարձակվելով): Համ կաշառում ա, համ ել դառնում, մարդու վրա ծիծաղում ա:

**ՈՀԱՆ.**—(Ուժով հրում է Յերեմին: Սա ընկնում է ու քնում) Փեսա-  
ջան, բանի տեղ մի գնի, Յերեմը հարբած ա:

**ԽԱՉՈ.**—(Ձեռքով ծեծում է կուրծքը) Ձեռն կարող համբերել: (Պի-  
ֆի գալով) Ե՛հ, լիս հանաք էլի անում. եկեք՝ իրար ձեռ-ձեռի  
տանք (Ականջ է դնում): Ախպրտա՛նք, իրար ձեռ-ձեռի  
տանք, ինձ վրա կորած տեղ չի հիթա: Սիմոնը գալիս ա,  
